Նորաշենիկ

Բնակչություն՝ 113

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 18 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1060 մ,

Գտնվում է Ողջիի ձախ վտակ Աճանան (Նորաշենիկ) գետի հովտում: Ներկայիս Նորաշենիկը համեմատաբար նոր գյուղ է, այստեղից էլ՝ Նորաշենիկ (Նոր շեն) անունը:: Հին գյուղը, որը գտնվում է ներկայիս Նորաշենիկից մոտ 1.5կմ հյուսիս-արևելք, մտնում էր Մեծ Հայքի Սյունիք նահանգի Բաղք գավառի մեջ: Հին գյուղատեղում կա 10-12-րդ դարերի եկեղեցի:
Նորաշենիկի պատմական հուշարձաններից է նաև 1884թ. կառուցված և 1990-93թթ. վերանորոգված եկեղեցին:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 1028 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 472 հա, որից՝
- վարելահող՝ 143 հա, բազմամյա տնկարկ՝ 9 հա, խոտհարք՝ 23 հա, արոտ՝ 191 հա, այլ հողատեսք՝106 հա
- բնակավայրերի հողեր՝ 32 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 47 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 6 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 2 հա,
- անտառային հողեր՝ 462 հա, որից անտառածածկ՝ 363 հա
- ջրային հողեր՝ 7 հա